



# ՍՈՒՐԲ ՉԱԿՈԲ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՑԻ

Կարմիր Կրոսկի  
7 ՄԱՅԻՍ 2017

Կիրակնօրեայ Ընթերցումներ էջ 1  
Վերանոգումը՝ Մանուկներու... էջ 3

ԸՆԹԵՐՑՈՒՄ  
«ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԵՐԸ»  
ԳԻՐՔԵՆ  
(13.16-43)

**Պ**օղոս ոտքի ելաւ, ձեռքով նշան ըրաւ  
որպէսզի լուեն, եւ ըսաւ.

«Ո՞վ իսրայէլացիներ եւ աստուածավախ  
մարդիկ, մտի՛կ ըրէք: Այս ժողովուրդին՝ Իսրայէլի  
Աստուածը ընտրեց մեր հայրերը, բազմացուց մեր  
ժողովուրդը որ Եգիպտոսի մէջ որպէս պանդուխտ  
կ'ապրէր, եւ իր մեծ զօրութեամբ զանոնք հոնկէ  
հանեց: Շուրջ քառասուն տարի անապատին  
մէջ կերակրեց զանոնք: Ապա Քանաան երկրի  
բնակիչ եօթը ազգերը պարտութեան մատնելով,  
անոնց երկիրը մեր ժողովուրդին տուաւ որպէս  
ժառանգութիւն: Այս բոլորը եղան մօտաւորապէս  
չորս հարիւր յիսուն տարիներու ընթացքին: Այնուհետեւ Դատաւորներ տուաւ անոնց, մինչեւ  
Սամուէլ մարդարէի ժամանակը, երբ մեր ժողովուրդը  
թագաւոր ուզեց, եւ Աստուած թագաւոր կարգեց  
Սաւուղը, Կիսի որդին որ Բենիամինի ցեղէն էր,  
քառասուն տարուան համար: Սաւուղէն ետք  
անոնց վրայ թագաւոր կարգեց Դաւիթը, որուն  
մասին նաեւ վկայեց, ըսելով.

“Դաւիթը, Յեսսէի Որդին, սրտիս խօսող անձն է,  
որ ամբողջութեամբ իմ կամքս պիտի կատարէ”:

«Անոր սերունդէն էր որ Աստուած Իսրայէլի  
տուաւ իր խոստացած Փրկիչը՝ Յիսուսը: Բայց  
նախքան անոր հրապարակ գալը, Յովհաննէս  
Իսրայէլի ամբողջ ժողովուրդին կը քարոզէր  
որ ապաշխարեն եւ մկրտուին: Եւ իր պաշտօնը  
լրացնելու ժամանակ, Յովհաննէս ըսաւ. “Ո՞վ կը  
կարծէք զիս: Ես ձեր սպասած անձը չեմ: Ահա ինձմէ  
վերջ կու դայ անիկա, որուն կօշիկները հանելու  
իսկ արժանի չեմ ես”:

«Եղբայրներ, Աբրահամեան տոհմի զաւակներ

եւ ձեր մէջ գտնուող աստուածա-վախ մարդիկ.  
փրկութեան այս պատգամը Աստուած ձեզի՛  
դրկեց: Որովհետեւ երու-սաղէմի բնակիչները  
եւ իրենց իշխանները չճանցան Յիսուսը, եւ  
զայն դատապարտելով՝ կատարած եղան խօսքը  
մարդարէներուն որ ամէն Շաբաթ կը կարդային:  
եւ թէպէտ մահուան արժանի յանցանք մը չգտան  
անոր վրայ, սակայն պահանջեցին Պիղատոսին որ  
սպաննուի: Երբ անոր մասին բոլոր գրուածները  
կատարած եղան, զայն խաչէն իջեցուցին եւ  
գերեզման դրին: Բայց Աստուած զայն մեռելներէն  
յարուցանեց, եւ Յիսուս բազմաթիւ օրեր երեւցաւ  
անոնց՝ որոնք իրեն հետ Գալիլիային երուսալէմ  
եկած էին, եւ որոնք հիմա իր վկաներն են  
ժողովուրդին առջեւ: Մենք ալ, ահա, ձեզի  
կ'աւետենք, թէ Աստուած մեր հայրերուն տուած  
իր խոստումը կատարեց մեր օրերուն, որ անոնց  
որդիներն ենք: Այդ խոստումը կատարեց՝ Յիսուսը  
յարուցանելով, ինչպէս երկրորդ Սաղմոսին մէջ ալ  
գրուած է.

“Դմ որդիս ես դուն, այսօ՛ր քեզ ծնայ”:

Նոյն այն իրողութիւնը, որ Աստուած զայն  
մեռելներէն յարուցանեց եւ անիկա այլեւս բնաւ  
մահ պիտի չտեսնէ, խոստում մըն է՝ մեզի ուղղուած,  
որովհետեւ Աստուած այսպէս կ'ըսէ.

“Զեզի պիտի տամ այն խկական օրինութիւնը  
որ Դաւիթի խոստացայ”, եւ ինչպէս ուրիշ Սաղմոսի  
մը մէջ սաղմոսագիրը կ'ըսէ. “Պիտի չըողուս որ քու  
ծառայիդ մարմինը փառութիւն տեսնէ”:

«Արդ, Դաւիթ իր սերունդին մէջ Աստուածոյ  
ծառայելէ ետք մեռաւ եւ իր հայրերուն քով  
թաղուեցաւ, եւ իր մարմինը փառցաւ: Բայց  
Աստուած յարուցանեց Յիսուսը, որուն մարմինը  
փառութիւն չտեսաւ: Ուստի իմացէք, եղբայրներ,  
Յիսուսի միջոցաւ մեղքերու թողութիւն կը  
քարոզուի ձեզի: Ո՞վ որ անոր կը հաւատայ՝  
կ'արդարանայ իր բոլոր մեղքերէն, որոնցմէ  
չկրցաք արդարանալ Մովսէսի Օրէնքին միջոցաւ:  
Զգո՛յշ եղէք ուրեմն որ ձեր վրայ չգայ այն ինչ  
որ մարդարէները կ'ըսեն.

“Տեսէք, ո՞վ արհամարհողներ, զարմացէք եւ  
կորսուեցէք. որովհետեւ ձեր օրերուն այնպիսի

գործ մը պիտի ընեմ, որուն պիտի չհաւատաք, նոյնիսկ երբ մէկը պատմէ ձեզի”»:

Երբ Բառնաբաս ու Պօղոս ժողովարանէն դուրս ելան, մարդիկ կ'աղաչէին որ միւս Շաբաթ եւս նոյն նիւթին մասին խօսին: Ժողովուրդին ցըռւելէն ետք, բազմաթիւ հրեաներ եւ հրէութեան դարձած բարեպաշտ օտարազգիներ հետեւեցան Պօղոսի եւ Բառնաբասի, որոնք անոնց հետ խօսեցան եւ համոզեցին զանոնք որ շարունակեն Աստուծոյ շնորհքին մէջ մնալ:

## ԸՆԹԵՐՑՈՒՄ ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԻՆ

(5.1-14)

**Ե**րէցներ, որպէս երիցակից մը որ ձեզի պէս վկայ եմ Քրիստոսի չարչարանքներուն եւ ձեզի հետ ալ մասնակից պիտի ըլլամ գալիք փառքին որ պիտի յայտնուի, կ'աղաչեմ ձեզի. ձեզի վստահուած Աստուծոյ հօտը արածեցէք ո՛չ թէ իրը պարտադրանք կատարելով վերակացութեան ձեր պաշտօնը, այլ կամաւորաբար, ինչպէս Աստուած կ'ուզէ: Ո՛չ թէ դրամի սիրոյն, այլ յօժարութեամբ: Ո՛չ թէ ձեզի վստահուած մարդոց ձեր անձերը պարտադրելով, այլ օրինակ ըլլալով ձեր հօտին. որպէսզի երբ Հովուապեար յայտնուի՝ անթառամ փառքի պսակը ընդունիք:

Նոյնպէս ալ դուք, երիտասարդներ, հնագա՞նդ եղէք ծերերուն: Բոլորդ ալ խոնարհաբար ծառայեցէք իրարու, որովհետեւ ինչպէս Առակաց Գիրքը կ'ըսէ.

“Աստուած հակառակ է ամբարտաւաներուն, մինչ խոնարհներուն շնորհի կու տայ”:

Հետեւաբար Աստուծոյ հզօր ձեռքին տակ խոնարհեցէք, որպէսզի երբ յարմար ժամանակը գայ՝ ձեզ բարձրացնէ: Զեր բոլոր հոգերը Աստուծոյ ձգեցէք, որովհետեւ ի՞նքը կը հոգայ ձեր մասին:

Արթուն եւ պատրաստ եղէք, որովհետեւ ձեր թշնամին՝ Սատանան առիւծի պէս մոնչելով կը շրջի եւ կլլելու համար մէկը կը փնտոէ: Հաստատուն հաւատքով դէմ դրէք անոր, գիտնալով որ աշխարհի մէջ բոլոր ձեր եղբայրներն ալ նոյն չարչարանքներէն կ'անցնին: Եւ բոլոր շնորհներու պարգեւիչը՝ Աստուած, որ Քրիստոս Յիսուսի միջոցաւ իր յաւիտենական փառքին կանչեց ձեզ, նկատի ունենալով որ չափով մը մասնակից եղաք Յիսուսի չարչարանքներուն, պիտի ձեզ կազդուրէ, զօրացնէ եւ ամուր հիմերու վրայ հաստատէ ձեզ: Յաւիտեան ի՞րն են իշխանութիւնն ու փառքը: Ամէն:

Այս հակիրճ նամակը ձեզի գրեցի Սիրուանոսի

ձեռքով - որ ըստ իս մեր հաւատարիմ եղբայրներէն է - որպէսզի քաջալերեմ ձեզ եւ վստահեցնեմ թէ Քրիստոսի չարչարակից ըլլալը Աստուծումէ տրուած իսկական շնորհք մըն է, որ դուք կը վայելէք ապահովաբար: Այստեղ, Բաբելոնի մէջ գտնուող եկեղեցին, որ ձեր ընտրելակիցն է, կ'ողջունէ ձեզ: Նոյնպէս բարեւներ Մարկոսէն, իմ որդիիս: Սիրոյ համբոյրով ողջունեցէք զիրար: Խաղաղութիւն ձեր բոլորին որ Քրիստոս Յիսուսի միացած էք: Ամէն:

## ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ

### ԸՍՏ ՅՈՎՃԱՆՆԵՍԻ

(5.19-30)

**Յ**իսուս անոնց ըստաւ. «Հաստատ գիտցէք, թէ մարդու Որդին ինք իրմէ ոչինչ կը կատարէ, այլ կը կատարէ միայն այն՝ ինչ որ կը տեսնէ թէ Հայրը կը կատարէ: Որովհետեւ ինչ որ Հայրը կը գործէ, Որդին ալ նոյնը կը գործէ: Հայրը կը սիրէ Որդին եւ անոր ցոյց կու տայ ինչ որ ինք կը կատարէ: Տակաւին ձեր տեսածներէն աւելի սքանչելի գործեր ալ ցոյց պիտի տայ Որդիին, այնպէս որ դուք պիտի զարմանաք: Ինչպէս որ Հայրը մեռելները կը յարուցանէ եւ կեանք կու տայ անոնց, նոյնպէս ալ Որդին կեանք կու տայ անոնց՝ որոնց ինք կ'ուզէ: Եւ Հայրը ուեւէ մէկը չի դատեր, այլ դատելու իշխանութիւնը ամբողջութեամբ յանձնած է իր Որդիին, որպէսզի բոլորն ալ պատուեն Որդին, ինչպէս որ Հայրը կը պատուեն: Ան որ չի պատուեր Որդին, չի պատուեր Հայրը որ գայն դրկած է:

«Հաստատ գիտցէք, ան որ իմ խօսքերս կը լսէ եւ կը հաւատայ անոր որ զիս դրկեց, յաւիտենական կեանք ունի եւ պիտի չդատապարտուի, որովհետեւ արդէն իսկ մահէն կեանքի անցած է: Վստահ եղէք, ժամանակ կու դայ - եւ արդէն իսկ եկած է - երբ մեռելները Աստուծոյ Որդիին ձայնը պիտի լսեն եւ լսողները պիտի ապրին: Որովհետեւ, ինչպէս որ Հայրը կեանք պարգեւելու զօրութիւնը ունի իր մէջ, այդ զօրութիւնը տուած է նաեւ Որդիին: Նոյնպէս ալ դատելու իշխանութիւնը տուաւ Որդիին, որովհետեւ անիկա մարդու Որդին է: Ուրեմն մի՛ զարմանաք որ ըսի, թէ ահա կու դայ ժամանակը, երբ բոլոր անոնք որոնք գերեզմաններու մէջ են՝ պիտի լսեն անոր ձայնը եւ դուրս գան. անոնք որ բարիք գործած են՝ յարութիւն պիտի առնեն եւ դատապարտուին: Ես ինձմէ չէ որ կը դատեմ, այլ կը դատեմ այնպէս ինչպէս Զօրմէս կը լսեմ. եւ ուրեմն իմ դատաստանս արդար է, որովհետեւ կը գործադրեմ ո՛չ թէ իմ կամքս, այլ կամքը անոր՝ որ զիս դրկեց»:

# ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԴԱՍԻԱՐԱԿԱՌԵԱՄՐ

Թորոս Կրսար. Պատրիարք

Սողոմոն Իմաստուն՝ Հին կտակարանի ժողովողի գիրքին մէջ ըսած է, «Ոչինչ նոր է արեւուն տակ», հաւանաբար ասիկա ճիշդ է աշխարհի բնակչութեան 20 առ հարիւրին համար որոնք տակաւին ելեկտրականութիւն չունին, սակայն մեզի համար որ Հիւսիսային ամերիկայի մէջ կ'ապրինք, ամէն օր փոփոխութիւն կայ....:

ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Մենք, անձնապէս եւ հաւաքաբար, մաս կը կազմենք այս փոփոխութիւններուն....:

Կարեւոր հարցումը այդ է թէ մեր մասնակցութիւնը այս փոփոխութեան մէջ ենթակայակա՞ն է թէ առարկայական:

Այսինքն, մե՞նք է որ կը պարտադրենք այս փոփոխութիւնը, մենք է որ կը սկսինք փոփոխութիւնը մե՞ր նպատակներուն համար, թէ փոփոխութիւնն է որ կը պարտադրուի մեր վրայ, որովհետեւ սկսուած է ուրիշներու կողմէ, անոնց շահերուն համար:

Իւրաքանչիւր փոփոխութիւն մէկու մը Վերանորոգումն է, մէկու մը update-ն է:

Օրինակներ

- Քաղաքական կեանքին մէջ

Ամէն նոր կառավարութիւն կու գայ նաեւ փոխելու, նորոգելու, վերանորոգելու նախորդին կողմէ սկսուած գործ մը, մատնանշելով անոնց թերութիւնները, ըստ իրենց....:

- Բջիջային Հեռախօսի աշխարհին մէջ

+Ամէն մարդ բջիջային հեռախօս ունի

+Անոր վրայ կրնանք դնել մեր ամբողջ պատրագը, ժամերգութիւնները: Սակայն հազիւ մի քանի անգամ վերանորոգուած է այս APP-ը:

+Հազար ու մէկ խաղեր կան, որոնք կը

վերանորոգուին շարունակաբար որովհետեւ կ'ուզեն աւելի եւ աւելի գերել գործածողները... ուրեմն իրենց կողմէ պարտադրուած վերանորոգումը կրնայ պատուհաս եւ վնաս ըլլալ ուրիշներու....:

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Այնքան ատեն որ փոփոխութիւն կայ, եւ ինչ-պէս նշեցինք որ միշտ կայ փոփոխութիւն, միշտ նորոգութեան եւ վերանորոգումի պէտքը կայ: Ինչո՞ւ:

Այո, Աստուած ստեղծեց տիեզերքը եւ սակայն այնքան ատեն որ յաւիտենականութեան մէջ չենք

ապրիր, հակամէտ ենք շեղելու այն նպատակէն որուն համար կանչուած էինք:

Յաւիտենականութեան մէջ վերանորոգումի պէտք չկայ որովհետեւ ամէն ինչ կը գործէ անսխալ, առանց շեղելու այն նպատակէն որուն համար ստեղծուած էր....:

Սակայն այս աշխարհին մէջ որ մենք կ'ապրինք, եւ որովհետեւ այս աշխարհը ոչ դրախտ է, ոչ յաւիտենականութիւն, մնայուն վերանորոգումի պէտք ունինք... որովհետեւ ամէն ինչ բնութեամբ հակամէտ է շեղելու իր նպատակէն եւ կը հիննայ... ազգուելով ժամանակէն եւ Տարածութենէն: (Յաւիտենականութեան մէջ, ոչ ժամանակ կայ, ոչ տարածութիւն):

Օրինակներ

- Եթէ ինքնաշարժ մը ունինք կը գործածենք 5, 6, 7 տարի... կը նորոգենք, կը վերանորոգենք, բայց երբ տեսնենք թէ այլեւս իր նպատակին, որ մեզի փոխադրել է, չի ծառայեր պէտք է նոր մը գնենք:

- Եթէ խնձորի ծառերու պարտէզ մը ունինք: Ծառերը, որոնք ստեղծուած են որ պտուղ տան, եթէ չտան, կարելի է պատուաստել ծառը որպէսզի պտուղ տայ սակայն 20-30 տարիներ ետք ծառը այլեւս իր նպատակին պիտի չի ծառայէ եւ ուրեմն պէտք է նոր ծառ տնկել որպէսզի պարտէզը պարտէզ մնայ... եւ շարունակէ պտուղ տալ....:

Համայնքները տարբեր չեն, յիշուած իրավիճակներէն, որովհետեւ ինչպէս Ծառերը կոչուած են պտուղ տալու, եւ ինքնաշարժները շինուած են մարդոց եւ առարկաներու փոխադրութեան համար, նոյնպէս ալ համայնքները ստեղծուած են իրենց անդամներուն ինքնութիւնները պահպանելու համար: Համայնք մը չի կրնար ծառայել նպատակի մը, կոչումի մը, երբ կը պակսի իրեն իր ինքնութեան խարիսխը կամ իր անհատականութեան առանձնայատուկ նկարագիրը:

- Համայնքը ինքնութիւններ պէտք ունի որպէս խարիսխ, որպէսզի փոթորկոտ ծովին ալիքներուն կարենայ հակագետել եւ շատ չի տարութերիլ, խորտակումէ փրկուելու համար:

- Ազգ մը եւ համայնք մը ՀՈԳԵԿԱՆ եի ԲԱՐՈՅՑԱԿԱՆ ինքնութիւններ պէտք ունին որովհետեւ երբ ազգի մը կամ համայնքի մը հոգեկան եւ բարոյական ոյժը տկարանայ, ոչ քաղաքական, ոչ սազմական եւ ոչ նիւթական հարստութիւննը կը փրկէ այդ ազգը կամ համայնքը:

- Եկեղեցւոյ չէնքը կարեւոր է, սակայն նիւթական արժէք ըլլալէ աւելի, չէնքը պէտք է դառնայ գործող հոգեկան ոյժ, բարոյական ուսուցում եւ նկարագրի կազմաւորման ընթացք....:

Եւ ի՞նչ է մեր համայնքին ինքնութիւնը: Մեր

Համայնքին ինքնութիւնը մեր ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ  
ինքնութիւնն է:

Վերագառնալով վերանորոգումի պարտէզի օրի-  
նակին, մեր համայնքին համար ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ  
ինքնութեամբ ծառեր պէտք է տնկուին.... Սակայն  
ծառ տնկելը չի բաւեր: Հաւանաբար պէտք է 5  
տարիներ սպասել, ջրել, խնամել ծառը որպէսզի սկսի  
պտուղ տալ.... անխնամ թողուած ծառը պտուղ պիտի  
չտայ, որովհետեւ պիտի որդնոտի....:

Ծառերը ջրելու եւ հոգ տանելու փոխաբերական  
իմաստը, մանուկի Դատիարակութիւնն է, եւ մենք  
մեր Սուրբ Յակոբ Կիրակոսեայ Դպրոցին մէջ  
այդ կը փորձենք ընել 37-րդ յաջորդական տարին  
ըլլալով....:

Կիրակոսեայ Դպրոցին նպատակն է.

Ա. Հայաստանեայց Եկեղեցւոյ գաւանութեան եւ  
աւանդութեան համաձայն կրօնական դաստիարա-  
կութիւն տալ մասնաւորապէս մանուկներուն եւ  
պատանիներուն, իբրեւ լրացուցիչ մասը ազգային  
ընդհանուր կրթութեան եւ դաստիարակութեան,  
եւ ընդհանրապէս ալ չափահասներուն աւանդել  
քրիստոնէութեան եւ Մայրենի Եկեղեցւոյ վերաբեր-  
եալ գիտելիքներ եւ ծանօթութիւններ:

Բ. Այս դաստիարակութեան նպատակն է Հայ  
ժողովուրդին զաւակները գիտակից ընել իրենց  
Քրիստոնէական կրօնքին եւ Մայրենի Եկեղեցւոյն  
եւ շինել անոնց քաղաքացիական նկարագիրը:

Վերջ ի վերջոյ եթէ մեր Համայնքի Պարտէզին  
մէջ Հայ Քրիստոնեայ Գիտակցութեամբ ապագայի  
սերունդ չպատրաստենք, Այն ատեն, որպէս համայնք  
չենք կրնար մեր ՀԱՅ Քրիստոնեայ նպատակին  
եւ Հայ Քրիստոնեայ կոչումին հաւատարիմ մնալ:  
Կրնանք մնալ համայնք, որոշ ժամանակի մը համար,  
սակայն անխարիսխ, ալիքներուն քմահաճոյքին  
ձգուած:

Եւ եթէ մեր Հայ Քրիստոնէութիւնը պիտի պահենք  
եւ մեր համայնքը վերանորոգենք, մեր մանուկները  
այնպէս պէտք է դաստիարակել որպէսզի անոնք.

- Սորվին Խաչ հանել եւ գիտնան թէ պէտք է  
ապրին այդ խաչը

- Սորվին Աղօթել եւ աղօթքներ որպէսզի  
կարենան շաղկապել իրենք զիրենք մինչեւ Վարդա-  
նանք, Մեսրոպ Մաշտոց եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ

- Գիտնան Հայ Բարքերու եւ կենցաղի մասին  
եւ մաս դարձնէ զանոնք իր առօրեային:

Մեր մանուկները այնպէս պէտք է դաստիարակել  
որպէսզի անոնք.

- Քաջածանօթըլլան Հայկական սովորութիւն-  
ներու

- Կարենան Հայերէն Աստուածաշունչ բանալ  
եւ կարգալ որպէսզի լիիրաւ մասնակցի Զինուորեալ  
Եկեղեցւոյ կեանքին

- Գիտնան Հայ Սուրբերու մասին եւ կապի մէջ  
ըլլայ Յաղթական Եկեղեցւոյ հետ  
  - Տօնեն Հայկական Տօները...
  - Գիտնան թէ ինչի՞ կը հաւատան երբ Հաւա-  
տամքը արտասանեն եւ Հաւատով Խոստովանիմը  
կարդան

Մեր մանուկները այնպէս պէտք է դաստիարակել  
որպէսզի անոնք.

- Գիտնան Հայ Եկեղեցւոյ պատմութիւնը որ-  
պէսզի գիտնան թէ ուրկէ կու գան եւ ո՞ւր կ'երթան  
  - Գիտնան Հայ Եկեղեցւոյ Տաղաւար տօները
  - Կարենան ունկնդրել եւ մասնակցիլ մեր  
շարականներու երգեցողութեան:

Մեր մանուկները պէտք է դաստիարակութիւն այս  
բոլորով իրենց՝ Հայ Քրիստոնեայ ինքնութիւնը  
շեշտելու եւ իրենց նկարագիրը կերտելու համար, եւ  
մենք այս բոլորին է որ կը ձգտինք մեր Կիրակոսեայ  
Դպրոցին մէջ:

Այս բոլորին համար է որ 37 տարիներէ ի վեր  
խաչվերացէն սկսելով ամէն Կիրակի կը հանդիպինք  
ժամը 10:30 էն մինչեւ Կէսօրէ ետք ժամը 1:00  
խաղեր կը խաղանք, խումբերու կը բաժնուինք եւ  
լսարանային պահեր կունենանք, երգեր ու շա-  
րականներ կը սորվեցնենք, դասարաններու կը  
բաժնուինք եւ իրաքանչիւր տարիքի համաձայն  
ձեռային աշխատանքներ եւ դասեր կ'ընենք, Հայե-  
րէնով Կայքէջ ունինք, [www.sourphagop.org-ը](http://www.sourphagop.org-ը),  
ամսաթերթ կը հրատարակենք «Մաշտոցի Արձա-  
գանգ»ը եւ այս տարի Մայիս 21-ին կ.ե. ժամը  
1:30-ին պիտի ունենանք մեր Ամավերջի հանդէսը  
որուն բոլորդ հրաւիրուած էք: Հոս կ'արժէ յիշել թէ  
մեր 10 հոգինոց Տնօրէնութեան եւ ուսուցչական  
կազմին 5 անդամները մեր Կիրակոսեայ Դպրոցի  
շրջանաւարտներն են, եւ մենք Մեր Կիրակոսեայ  
Դպրոցի վերանորոգման գործընթացը արդէն սկսած  
ենք:

Այս տարի վերանորոգումի տարի է, սակայն  
հարցը վերանորոգումը չէ, որովհետեւ վերանորո-  
գումի պէտքը մարդուն հետ կու գայ (it's a given):  
Հարցը, վերանորոգումի որակը, եղանակը, չափն ու  
կշիռը ճշգելն է:

- Ի՞նչ որակո՞վ պիտի վերանորոգենք այն ինչ  
որ ժառանգած ենք
- Ի՞նչ եղանակով պիտի վերանորոգենք
- Եւ որչա՞փ ճիգ եւ կարողոթիւն պատրաստ  
ենք տրամադրելու այս վերանորոգման աշխատան-  
քին, մեր Հայ Քրիստոնեայ ապագային համար, որ  
կը սկսի մեր այսօրուան մանուկներու դաստիա-  
րակութեամբ: